Հաստատում եմ
Ռեկտոր Ն. Ա. Միքայելյան
Հունվարի 17-ի 2022թ

1. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ /2022-2024թթ/

Խթանել արտաքին կապերը և Համալսարանի միջազգայնացումը:

Խնդիր 1. Միջազգայնացման տարրեր ներդնել ակադեմիական կրթության և գիտահետազոտական գործընթացներում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1.1Ուսումնասիրել չճանաչված երկրների նմանատիպ համալսարանների միջազգայնացման և արտաքին համագործակցության փորձը և մեխանիզմները:

• Համալսարանների միջազգայնացման և արտաքին համագործակցության փորձի բենչմարկինգ : • Վերանայված մեխանիզմներ :

1.2 Տեղայնացնել միջազգայնացման փորձի տարրեր և ինտեգրել բուհի գործունեության ոլորտներում:

• Վերանայված քաղաքականություն :

1.3 Վերանայել միջազգայնացման քաղաքականությունը և ընթացակարգերը, իրականացնել գործընթացների տարեկան մշտադիտարկում:

• Բարելավված միջազգայնացման ընթացակարգեր: • Տարեկան հաշվետվություն :

Խնդիր 2. Իրականացնել կադրային ներուժի մասնագիտական ուսուցում, վերապատրաստումների կազմակերպում և ձևավորել շարժունությունը խթանող մեխանիզմներ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

2.1 Բարձրացնել տեղեկացվածության մակարդակը գիտակրթական ծրագրերի վերաբերյալ և տրամադրել խորհրդատվություն՝ դրամաշնորհների հանրապետական և միջազգային աղբյուրների որոնման ու ծրագրային առաջարկների մշակման համար

- Դիմած և շահած դրամաշնորհների քանակ:
- Սոցիալական ցանցերում տրամադրված տեղեկություն ծրագրերի վերաբերյալ
- Գիտակրթական ծրագրերի վերաբերյալ տրամադրված խորհրդատավության ծավալ:

2.2 Ընդլայնել համագործակցությունը օտարերկյա և տեղական բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ

- Հուշագրերի քանակի աճ /5 տոկոս/:
- Գիտական, կրթական և գիտաարտադրական ծրագերի աճ:

2.3 Զարգացնել սովորողների և ՊԴ կազմի կարողությունները, շարժունությունը խթանելու նպատակով :

- Ծրագրերում ներգրավված աշխատակիցների և ուսանողների թվի աճ:
- Լեզվական կարիքները բարելավված ուսանողների և դասախոսների թիվ:
- Վերապատրաստված աշխատակիցների թվի աճ:
- ՊԴ կազմի կողմից տպագրված գիտական աշխատանքների աճ:

Խնդիր 3. Բարելավել փոխհամագործակցության մեխանիզմները Համալսարանի կադրային ներուժի և ուսանողների ու պետական, մասնավոր, Հասարակական կազմակերպությունների, արտասահմանյան, Սփյուռքի շահագրգիռ կողմերի միջև:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

3.1. Զարգացնել Համալսարանի ռեսուրսները՝ դիմելով դրամաշնորհային ծրագրերի և հայթայթելով ֆինանսական միջոցներ:

- Ֆինանսական աջակցման ծրագրերի քանակ:
- Նվիրատվություն տրամադրած անձինք /կազմակերպություններ/: Նվիրատվությունների քանակ:

3.2 Համագործակցություն հաստատել պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների հետ՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցվածությունը:

- Կազմակերպված համատեղ միջոցառումների թվի աճ:

3.3 Ընդլայնել համալսարանի ՊԴ կազմի, ուսանողների կրթական և գիտական կարողությունները՝ ազգային և միջազգային դոնորների, ՀԿ-երի հետ համագործակցության միջոցով:

• Կազմակերպած խորհրդատվություններ և սեմինարներ:

Խնդիր 4. Բարձրացնել Համալարանի տեսանելիությունը փոխհամագործակցության միջոցով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

4.1 Համալսարանի կայքէջը դարձնել հասանելի օտարերկրյա օգտատերերին՝ կատարելագործելով օտար լեզվով տեղադրվող նյութերը:

• Վերանայված եռալեզու ինտերակտիվ կայք:

4.2 Թարգմանել և կայքի միջոցով հրապարակել համալսարանական ռազմավարական փաստաթղթերի, կրթական ծրագրերի և միջազգայնացման ընթացակարգերի օտարալեզու տարբերակները:

• Կայքում տեղադրված ընթացակարգերի օտարալեզու տարբերակները: • Հրապարակված Օտար լեզվով /ռուսերեն կամ անգլերեն/ առնվազն 1 մասնագիտական կրթական ծրագիր:

4.3 Կազմակերպել գիտակրթական, մշակութային և այլ միջոցառումներ՝ օժանդակելով սովորողների և աշխատակիցների մասնակցությունը համագործակցային ծրագրերին:

• Համագործակցության առկայություն: • Համատեղ միջոցառումների քանակ: • Միջոցառումներին մասնակցած ուսանողների և աշխատակիցների աճ:

4.4 Ստեղծել կապեր սփյուռքի համապատասխան մասնագետների հետ և օգտագործել նրանց ներուժը Համալսարանի զարգացման համար:

• Տարեկան առնվազն 1 մասնագետի կողմից իրականացված դասընթաց /այդ թվում՝ վիրտուալ/:

Խնդիր 5. Խթանել քաղաքականությունների մշակման և օրենսդրական դաշտի կարգավորումը կրթության, գիտության և միջազգայնացման ոլորտների համար:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

5.1 Ներկայացնելել Համալսարանի գործունեությանը առնչվող ոլորտներում իրավական բարեփոխումների առաջարկներ և առաջադրել օրենսդրական նախաձեռնություններ:

• **<u>Բուհի կողմից տրամադրված խորհրդատվության ծավալ:</u>** • **<u>Միջազգայնացման գործընթացները կարգավորող առաջարկների փաթեթ :</u>**

Արտաքին Կապերի և Միջազգայնացման Գնահատման Առանցքային Ցուցիչներ (ԳԱՑ)

- Համալսարանի միջազգայնացման հայեցակարգն արտահայտող հաստատագրված փաստաթղթի առկայություն:
- Միջազգային քաղաքականության կատարողականի գնահատման առանցքային ցուցանիշներ:
- Հաստատված միջազգայնացման ընթացակարգեր և մշտադիտարկման մեխանիզմներ:
- Ուսանողների և ՊԴ կազմի շրջանակներում տեղեկացվածության մակարդակի բարձրացում և տրամադրված խորհրդատվության ծավալ:
- Դրամաշնորհային ծրագրերի և դրամական մուտքերի աճ :
- Համալսարանի կողմից իրականացվող ծրագրերի քանակ ըստ երկրների և բուհերի:
- Նվիրատվություն տրամադրողների և ֆինանսական աջակցման ծրագրերի քանակ:
- Արտասահմանյան գործընկերային կապերի / ըստ գործող պայմանագրերի/ թվի աճ՝ առնվազն 10 տոկոս
- Շարժունության տարբեր ծրագրերում ներգարվված դասախոսների, ասպիրանտների, հայցորդների և ուսանողների ընդհանուր թվի աճ ՝ 10-15 տոկոս
- Անգլերեն/ ռուսերեն լեզվով իրականացվող 2-3 բակալավրական կրթական ծրագրեր
- Գործող կրթական ծրագրերում ներդրված 5-10 -անգլա կամ -ռուսա լեզու դասընթացներ
- Միջազգային համատեղ գիտակրթական ծրագրերի իրականացման թիվը , այդ ծրագրերում ընդգրկված ուսանողների և դասախոսների թիվը
- Համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովների, սեմինարների թիվը, այդ միջոցառումներին մասնակցած ուսանողներրի և դասախոսների թիվը
- Կրկնակի դիպլոմներ տրամադրող կրթական ծրագրերի թիվը
- Օտար լեզուներին տիրապետող աշխատակիցների թիվը

- Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը: